Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1332-21.04.2026-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տոհմային անասնաբուծության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի մայիսի 20-ի ՀՕ-122-Ն օրենքը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան և կիրառման ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տոհմային անասնաբուծության ոլորտի գործունեության իրականացումը, կառավարմանն առնչվող հարաբերությունները:

2. Սույն օրենքը տարածվում է տոհմային անասնաբուծության ոլորտում ծագած հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ տոհմային անասնաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց վրա:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքը սահմանում է ոլորտային հիմնական հասկացությունները՝

1) **տոհմային անասնաբուծություն՝** սելեկցիայի նպատակով տոհմային կենդանիների բուծում, տոհմանյութի արտադրություն և օգտագործում.
2) **տոհմանյութ՝** տոհմային կենդանի, սերմնահեղուկ (սպերմա), սաղմ, ձվաբջիջ, ձու, մեղվի մայրապտուկ, ձկնկիթ.
3) **տոհմային կենդանի՝** բուծման նպատակով օգտագործվող գյուղատնտեսական մաքրացեղ կենդանի, որը տոհմային անասնաբուծության ոլորտում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է տոհմային կենդանիների հաշվառման ռեեստրում
4) **տոհմային արժեք՝** տոհմային կենդանու գենետիկական ներուժի մակարդակը և դրա ազդեցությունը սերնդի տնտեսական օգտակար հատկությունների վրա.
5) **բոնիտավորում՝** հետագա օգտագործման նպատակով գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկությունների, ինչպես նաև տոհմանյութի գնահատում և դասակարգում.
6) **տոհմային վկայական (անձնագիր)՝** սահմանված նմուշի փաստաթուղթ, որով հաստատվում է տոհմային կենդանու ծագումը, մթերատվությունը և տոհմային արժեքը, ինչպես նաև սաղմի և սերմնահեղուկի ծագումը, տոհմային արժեքը և այլ հատկանիշներ
7) **տոհմային գրանցում՝** տոհմային արժեք ներկայացնող կենդանիների, նախիրների, հոտերի, երամակների և գյուղատնտեսական կենդանիների ցեղերի ու նրանց խմբերի տոհմային կարգավիճակի ամրագրում.
8) **տոհմային անասնաբուծությամբ զբաղվող անձ՝** սելեկցիոն նպատակով տոհմային կենդանիների բուծում և տոհմանյութ արտադրող ու օգտագործող, ինչպես նաև տոհմային անասնաբուծության ոլորտում

տոհմային ծառայություն մատուցող ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր.

9) **տոհմային կենդանիների մթերատվություն՝** տոհմային կենդանիների տնտեսական օգտակար հատկությունների և նրանցից ստացվող արտադրանքի քանակական ու որակական ցուցանիշների ամբողջություն.
10) **մաքրացեղ բուծում՝** միևնույն ցեղին պատկանող կենդանիների բուծում՝ այդ ցեղին յուրահատուկ հատկությունների կայունացման նպատակով.
11) **տոհմային կենդանիների պետական գրանցում՝** տոհմային կենդանիների վերաբերյալ տեղեկատվության համապատասխանաբար գրանցում պետական տոհմային գրքում և տոհմային կենդանիների պետական ռեեստրում՝ տոհմային կենդանիների նույնականացման, ծագման որոշման և մթերատվության հաստատման նպատակով
12) **գյուղատնտեսական կենդանիների պետական տոհմային գիրք՝** որևէ ցեղի բարձր մթերատու տոհմային կենդանիների կամ հոտերի, նախիրների և երամակների տվյալների հավաքածու.
13) **տոհմային կենդանիների պետական ռեեստր՝** տվյալների շտեմարան, որը պարունակում է տեղեկություններ տոհմային կենդանիների և տոհմային հոտերի մասին.
14) **տոհմային անասնաբուծական տնտեսություն՝** ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղվում են տոհմային կենդանիների բուծմամբ, դրանց արտադրողականության և տոհմային հատկանիշների բարելավմամբ, վաճառքով, փորձարկմամբ, ինչպես նաև կենդանիների արհեստական սերմնավորմամբ և սաղմերի փոխպատվաստմամբ
15) **լիազոր մարմին՝** Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
16) **տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակի վկայական՝** լիազոր մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որը հավաստում է անասնաբուծական տնտեսության տոհմային լինելը
17) **տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակ՝** լիազոր մարմնի կողմից տոհմային անասնաբուծական տնտեսության՝ տոհմային լինելու հավաստում:

Հոդված 3. Տոհմային անասնաբուծության մասին օրենսդրությունը

1. Տոհմային անասնաբուծության ոլորտում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, իրավական այլ ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2. Տոհմային անասնաբուծության ոլորտում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և սույն օրենքի նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Գ Լ ՈՒ Խ 2

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 4. Տոհմային անասնաբուծության ոլորտում Կառավարության իրավասությունները

1. Տոհմային անասնաբուծության ոլորտում Կառավարության իրավասություններն են՝

1) տոհմային անասնաբուծության ոլորտում պետական աջակցության ծրագրերի հաստատումը

2) տոհմային անասնաբուծության զարգացման համար տոհմասելեկցիոն գործընթացի իրականացման նպատակով ծրագրերի հաստատումը

3) տոհմային անասնաբուծության ոլորտում մասնագետների վերապատրաստման կարգի հաստատումը

4) տոհմային կենդանիների պետական գրանցման կարգի հաստատումը

Հոդված 5. Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) տոհմային վկայականների (անձնագրերի) ձևերի հաստատումը
2) տոհմային անասնաբուծությամբ զբաղվող անձանց կողմից վարվող գրանցամատյանների ձևերի հաստատումը.
3) տոհմային անասնաբուծական տնտեսությունների գրանցման և հաշվառման կարգի հաստատումը.
4) պետական աջակցության ծրագրերի մոնիթորինգի կարգի հաստատումը
5) պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շահառուների կողմից տրամադրվող հաշվետվության ձևի հաստատումը
6) պետական տոհմային գրքի կազմման և տոհմային կենդանիների պետական ռեեստրի վարման կարգի հաստատումը
7) տոհմային անասնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջների հաստատումը
8) տոհմային անասնաբուծական տնտեսություններին տոհմային կարգավիճակի տրման և դադարեցման կարգի հաստատումը
9) տոհմային կենդանիների բոնիտավորման հրահանգների և գնահատման կարգի հաստատումը.
10) տնտեսության տոհմային կարգավիճակի վկայականի ձևի և տրման կարգի հաստատումը:

Գ Լ ՈՒ Խ 3

ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՈՆԻՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 6. Տոհմային կենդանիների բոնիտավորումը

1 Տոհմային կենդանիների բոնիտավորում անցկացվում է ամեն տարի գործող բոնիտավորման կարգին համապատասխան ըստ կենդանատեսակների և ցեղի, բոլոր այն կազմակերպություններում, որոնք արտադրում են տոհմանյութ:

2 Տոհմային կենդանիների բոնիտավորումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից հաստատված համապատասխան հրահանգներով:

3 Ըստ կենդանատեսակի և ցեղի տոհմային կենդանիների բոնիտավորումը իրականացվում է անասնաբույծ մասնագետների կողմից:

4 Բոնիտավորման արդյունքները արտացոլվում են բոնիտավորման մատյաններում և ամփոփվում համապատասխան տոհմային անասնաբուծությամբ զբաղվող անձի կողմից:

Հոդված 7. Տոհմային կենդանիների գնահատումը

1 Ցեղի վերարտադրության համար ընտրված տոհմային արու և էգ կենդանիները ենթակա են գնահատման՝ ըստ սերնդի որակի, մթերատվության և տոհմանյութի:

2 Տոհմային կենդանիների գնահատումն անցկացվում է այն տոհմային նախիրներում, հոտերում և երամակներում, որտեղ առկա է գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձր մակարդակ:

3 Տոհմային կենդանիների գնահատումն իրականացվում է անասնաբույծ մասնագետների կողմից:

Գ Լ ՈՒ Խ 4

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 8. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների տեսակները

1 Տոհմային անասնաբուծական տնտեսությունների հիմնական տեսակներն են՝

1) տոհմաբուծարանները.
2) տոհմային վերարտադրողական տնտեսությունները.
3) գենոֆոնդային տնտեսությունները.
4) սելեկցիոն կայանները.
5) գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման և սաղմերի փոխպատվաստման կազմակերպությունները.
6) Ֆերմաները:

2 Տոհմային անասնաբուծական տնտեսությունների համապատասխանությունն իրականացվում է լիազոր մարմնի կողմից հաստատված տոհմային անասնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Հոդված 9. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների կարգավիճակը և գործունեության սկզբունքները

1 Տոհմային անասնաբուծական տնտեսությունները գործում են յուրաքանչյուր ցեղի համար նախատեսված տոհմասելեկցիոն ծրագրերի համաձայն, որը հաստատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

2 Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հաշվառված և գրանցված անասնաբուծական տնտեսությունները ստանում են տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակ:

3 Տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակը տրվում է հինգ տարի ժամկետով, որի վերաբերյալ լիազոր մարմինը տալիս է համապատասխան վկայական:

4 Տոհմային անասնաբուծական տնտեսությունը ստանում է տոհմային կարգավիճակ, եթե համապատասխանում է տոհմային անասնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջներին:

5 Տնտեսության տոհմային կարգավիճակը կարող է դադարեցվել՝

1) տոհմային կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերում կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) տոհմային անասնաբուծությամբ զբաղվող իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ լուծարման կամ ֆիզիկական անձի մահվան դեպքում
3) տոհմային անասնաբուծությամբ զբաղվող իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի դիմումի համաձայն.
4) տնտեսության տոհմային կարգավիճակի ժամկետը լրանալու դեպքում:
6 Տնտեսության տոհմային կարգավիճակի ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված ժամկետի չափով:
7 Տոհմային անասնաբուծական տնտեսությունները իրենց գործունեությունը կազմակերպում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝
1) ապահովել ցեղի կատարելագործումը, պահպանել տոհմային կենդանիներին, որոնք պատկանում են տեղական և աշխարհում լայնորեն տարածում ստացած գենոֆոնդներին, առաջնահերթություն տալով դրանց մաքրացեղ բուծմանը
2) ռացիոնալ օգտագործել տոհմային ռեսուրսները
3) լավագույն ցեղերի գենոֆոնդի օգտագործմամբ տեղական տոհմային և մթերատու հատկանիշներով կենդանիների թվաքանակի աճ և կատարելագործում
4) գիտական հիմունքներով կենսաբանական բազմազանության ապահովում և պաշտպանություն
5) ցեղի համապատասխանեցում տարածաշրջանի պայմաններին
6) պահպանել տոհմային կենդանիների խնամքին և պահմանը ներկայացվող ընդհանուր անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջները:»:

Հոդված 2.

1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:
3 Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտը գործող տոհմային տնտեսությունների համար ուժի մեջ կմտնի սույն օրենքն ընդունվելուց 6 ամիս հետո:

Կ-1332-21.04.2026-ՏՏԳՇ-011/1

Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տոհմային անասնաբուծության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի մայիսի 20-ի ՀՕ-122-Ն օրենքը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

~~2005 թվականի մայիսի 20-ի «Տոհմային անասնաբուծության մասին» ՀՕ-122-Ն օրենքը (այսուհետ՝ Նախագիծ)~~

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան և կիրառման ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տոհմային անասնաբուծության ոլորտի գործունեության իրականացումը, կառավարմանն առնչվող հարաբերությունները:

2. Սույն օրենքը տարածվում է տոհմային անասնաբուծության ոլորտում ծագած հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ տոհմային անասնաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց վրա:

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքը սահմանում է ոլորտային հիմնական հասկացությունները՝

1) **տոհմային անասնաբուծություն՝** սելեկցիայի նպատակով տոհմային կենդանիների բուծում, տոհմանյութի արտադրություն և օգտագործում.

2) **տոհմանյութ՝** տոհմային կենդանի, սերմնահեղուկ (սպերմա), սաղմ, ձվաբջիջ, ձու, մեղվի մայրապտուկ, ձկնկիթ.

3) **տոհմային կենդանի՝** բուծման նպատակով օգտագործվող գյուղատնտեսական մաքրացեղ կենդանի, որը տոհմային անասնաբուծության ոլորտում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է տոհմային կենդանիների հաշվառման ռեեստրում.

4) **տոհմային արժեք՝** տոհմային կենդանու գենետիկական ներուժի մակարդակը և դրա ազդեցությունը սերնդի տնտեսական օգտակար հատկությունների վրա.

5) **բոնիտավորում՝** հետագա օգտագործման նպատակով գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկությունների, ինչպես նաև տոհմանյութի գնահատում և դասակարգում.

6) **տոհմային վկայական (անձնագիր)՝** սահմանված նմուշի փաստաթուղթ, որով հաստատվում է տոհմային կենդանու ծագումը, մթերատվությունը և տոհմային արժեքը, ինչպես նաև սաղմի և սերմնահեղուկի ծագումը, տոհմային արժեքը և այլ հատկանիշներ.

7) **տոհմային գրանցում՝** տոհմային արժեք ներկայացնող կենդանիների, նախիրների, հոտերի, երամակների և գյուղատնտեսական կենդանիների ցեղերի ու նրանց խմբերի տոհմային կարգավիճակի ամրագրում.

8) **տոհմային անասնաբուծությամբ զբաղվող անձ՝** սելեկցիոն նպատակով տոհմային կենդանիների բուծում և տոհմանյութ արտադրող ու օգտագործող, ինչպես նաև տոհմային անասնաբուծության ոլորտում տոհմային ծառայություն մատուցող ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր.

9) **տոհմային կենդանիների մթերատվություն՝** տոհմային կենդանիների տնտեսական օգտակար հատկությունների և նրանցից ստացվող արտադրանքի քանակական ու որակական ցուցանիշների ամբողջություն.

10) **մաքրացեղ բուծում՝ միևնույն ցեղին պատկանող կենդանիների բուծում՝** այդ ցեղին յուրահատուկ հատկությունների կայունացման նպատակով.

11) **տոհմային կենդանիների պետական գրանցում՝** տոհմային կենդանիների վերաբերյալ տեղեկատվության համապատասխանաբար գրանցում պետական տոհմային գրքում և տոհմային կենդանիների պետական ռեեստրում՝ տոհմային կենդանիների նույնականացման, ծագման որոշման և մթերատվության հաստատման նպատակով.

12) **գյուղատնտեսական կենդանիների պետական տոհմային գիրք՝** որևէ ցեղի բարձր մթերատու տոհմային կենդանիների կամ հոտերի, նախիրների և երամակների տվյալների հավաքածու.

13) **տոհմային կենդանիների պետական ռեեստր՝** տվյալների շտեմարան, որը պարունակում է տեղեկություններ տոհմային կենդանիների և տոհմային հոտերի մասին.

14) **տոհմային անասնաբուծական տնտեսություն**~~՝ իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերեր~~ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղվում են տոհմային կենդանիների բուծմամբ, դրանց արտադրողականության և տոհմային հատկանիշների բարելավմամբ, վաճառքով, փորձարկմամբ, ինչպես նաև կենդանիների արհեստական սերմնավորմամբ և սաղմերի փոխպատվաստմամբ.

15) **լիազոր մարմին՝** Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն.

16) **տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակի վկայական՝** լիազոր մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որը հավաստում է անասնաբուծական տնտեսության տոհմային լինելը.

17) **տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակ՝** լիազոր մարմնի կողմից տոհմային անասնաբուծական տնտեսության՝ տոհմային լինելու հավաստում:

Հոդված 3. Տոհմային անասնաբուծության մասին օրենսդրությունը

1. Տոհմային անասնաբուծության ոլորտում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, իրավական այլ ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2. Տոհմային անասնաբուծության ոլորտում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և սույն օրենքի նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 4. Տոհմային անասնաբուծության ոլորտում Կառավարության իրավասությունները

1. Տոհմային անասնաբուծության ոլորտում Կառավարության իրավասություններն են՝

1) տոհմային անասնաբուծության ոլորտում պետական աջակցության ծրագրերի հաստատումը.

2) տոհմային անասնաբուծության զարգացման համար տոհմասելեկցիոն գործընթացի իրականացման նպատակով ծրագրերի հաստատումը.

3) տոհմային անասնաբուծության ոլորտում մասնագետների վերապատրաստման կարգի հաստատումը.

4) տոհմային կենդանիների պետական գրանցման կարգի հաստատումը:

Հոդված 5. Լիազոր մարմնի լիազորությունները

1. Լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) տոհմային վկայականների (անձնագրերի) ձևերի հաստատումը.

2) տոհմային անասնաբուծությամբ զբաղվող անձանց կողմից վարվող գրանցամատյանների ձևերի հաստատումը.

3) տոհմային անասնաբուծական տնտեսությունների գրանցման և հաշվառման կարգի հաստատումը.

4) պետական աջակցության ծրագրերի մոնիթորինգի կարգի հաստատումը.

5) պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շահառուների կողմից տրամադրվող հաշվետվության ձևի հաստատումը.

6) պետական տոհմային գրքի կազմման և տոհմային կենդանիների պետական ռեեստրի վարման կարգի հաստատումը.

7) տոհմային անասնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջների հաստատումը.

8) տոհմային անասնաբուծական տնտեսություններին տոհմային կարգավիճակի տրման և դադարեցման կարգի հաստատումը.

9) ~~տոհմային կենդանիների բոնիտավորման հրահանգների հաստատումը.~~

տոհմային կենդանիների բոնիտավորման հրահանգների և գնահատման կարգի հաստատումը.

10) տնտեսության տոհմային կարգավիճակի վկայականի ձևի և տրման կարգի հաստատումը:

ԳԼՈՒԽ 3

ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՈՆԻՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 6. Տոհմային կենդանիների բոնիտավորումը

1. Տոհմային կենդանիների բոնիտավորում անցկացվում է ամեն տարի գործող բոնիտավորման կարգին համապատասխան ըստ կենդանատեսակների և ցեղի, բոլոր այն կազմակերպություններում, որոնք արտադրում են տոհմանյութ:

2. Տոհմային կենդանիների բոնիտավորումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից հաստատված համապատասխան հրահանգներով:

3. Ըստ կենդանատեսակի և ցեղի տոհմային կենդանիների բոնիտավորումը իրականացվում է անասնաբույծ մասնագետների կողմից:

4. Բոնիտավորման արդյունքները արտացոլվում են բոնիտավորման մատյաններում և ամփոփվում համապատասխան տոհմային անասնաբուծությամբ զբաղվող անձի կողմից:

Հոդված 7. Տոհմային կենդանիների գնահատումը

1. Ցեղի վերարտադրության համար ընտրված տոհմային արու և էգ կենդանիները ենթակա են գնահատման՝ ըստ սերնդի որակի, մթերատվության և տոհմանյութի:

2. Տոհմային կենդանիների գնահատումն անցկացվում է այն տոհմային նախիրներում, հոտերում և երամակներում, որտեղ առկա է գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձր մակարդակ:

3. Տոհմային կենդանիների գնահատումն իրականացվում է անասնաբույծ մասնագետների կողմից:

ԳԼՈՒԽ 4

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 8. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների տեսակները

1. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների հիմնական տեսակներն են՝

1) տոհմաբուծարանները.

2) տոհմային վերարտադրողական տնտեսությունները.

3) գենոֆոնդային տնտեսությունները.

4) սելեկցիոն կայանները.

5) գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման և սաղմերի փոխպատվաստման կազմակերպությունները.

6) Ֆերմաները:

2. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների համապատասխանությունն իրականացվում է լիազոր մարմնի կողմից հաստատված տոհմային անասնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

3. Տոհմային անասնաբուծական տնտեսությունները անկախ կազմակերպաիրավական ձևից պետք է գրանցվեն համապատասխան լիազոր մարմնում:

Հոդված 9. Տոհմային անասնաբուծական տնտեսությունների գործունեության սկզբունքները

1. Տոհմային անասնաբուծական տնտեսությունները գործում են յուրաքանչյուր ցեղի համար նախատեսված տոհմասելեկցիոն ծրագրերի համաձայն, որը հաստատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

2~~. Տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակը որոշվում է լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով իրականացվող- հաշվառման եւ գրանցման- հիման վրա:~~

Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հաշվառված և գրանցված անասնաբուծական տնտեսությունները ստանում են տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակ:

~~3. Հաշվառման և գրանցման հիման վրա անասնաբուծական տնտեսությունները ստանում են տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակ:~~

3. Տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակը տրվում է հինգ տարի ժամկետով, որի վերաբերյալ լիազոր մարմինը տալիս է համապատասխան վկայական:

4. Տոհմային անասնաբուծական տնտեսությունը ստանում է տոհմային կարգավիճակ, եթե համապատասխանում է տոհմային անասնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջներին:

5 Տնտեսության տոհմային կարգավիճակը կարող է դադարեցվել՝
1) տոհմային կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերում կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.
2) տոհմային անասնաբուծությամբ զբաղվող իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ լուծարման կամ ֆիզիկական անձի մահվան դեպքում
3) տոհմային անասնաբուծությամբ զբաղվող իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի դիմումի համաձայն.
4) տնտեսության տոհմային կարգավիճակի ժամկետը լրանալու դեպքում:
6 Տնտեսության տոհմային կարգավիճակի ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված ժամկետի չափով:

7. Տոհմային անասնաբուծական տնտեսությունները իրենց գործունեությունը կազմակերպում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) ապահովել ցեղի կատարելագործումը, պահպանել տոհմային կենդանիներին, որոնք պատկանում են տեղական և աշխարհում լայնորեն տարածում ստացած գենոֆոնդներին, առաջնահերթություն տալով դրանց մաքրացեղ բուծմանը.

2) ռացիոնալ օգտագործել տոհմային ռեսուրսները.

3) լավագույն ցեղերի գենոֆոնդի օգտագործմամբ տեղական տոհմային և մթերատու հատկանիշներով կենդանիների թվաքանակի աճ և կատարելագործում.

4) գիտական հիմունքներով կենսաբանական բազմազանության ապահովում և պաշտպանություն.

5) ցեղի համապատասխանեցում տարածաշրջանի պայմաններին.

6) պահպանել տոհմային կենդանիների խնամքին և պահմանը ներկայացվող ընդհանուր անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջները:

~~ԳԼՈՒԽ 5~~

~~ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ~~

~~Հոդված 10. Օրենքի ուժի մեջ մտնելը~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:»:~~

Հոդված 2.

1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո:

~~2. Սույն օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:~~

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

3 Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտը գործող տոհմային տնտեսությունների համար ուժի մեջ կմտնի սույն օրենքն ընդունվելուց 6 ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏՈՀՄԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-1332-21.04.2026-ՏՏԳԾ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«					
	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	**Նախագծի 1-ին հոդվածից առաջարկվել է հանել այսուհետ՝ Նախագիծ)» բառերը:**	Ընդունվել է:	Ընդունվել է:

	Կառավարություն	Օրենքի 2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Տոհմային անասնաբուծության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի եւ 14-րդ կետերի միջև առկա է անհամապատասխանություն, քանզի 8-րդ կետով տոհմային անասնաբուծությամբ զբաղվող սուբյեկտների թվում են՝ • Ֆիզիկական անձիք • Իրավաբանական անձիք • Անհատ ձեռնարկատերերը: Մինչդեռ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն տոհմային անասնաբուծական տնտեսության կարգավիճակ կարող են ստանալ միայն իրավաբանական անձիք եւ անհատ ձեռնարկատերերը՝ կարգավորումից դուրս թողնելով ֆիզիկական անձանց: Առաջարկվել է այս անհամապատասխանությունը վերանայել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Կառավարություն	Օրենքի 5-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածի համաձայն՝ արու եւ էգ կենդանիները ենթակա են գնահատման՝ ըստ սերնդի որակի, մթերատվության եւ տոհմանյութի:»: Նշվել է, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ եւ 5-րդ հոդվածներով նախատեսվող Կառավարության եւ լիազոր մարմնի լիազորություններում բացակայում է գնահատման կարգի սահմանումը: Ուստի առկա է իրավական բաց, թե ինչպես եւ ինչ կարգի հիման վրա է իրականացվելու Նախագծի 1-	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածով նախատեսվող գնահատումը: Առաջարկվել է վերացնել հնարավոր իրավական բացը՝ նախատեսելով համապատասխան կարգավորումները:		
	Կառավարություն	Օրենքի 8-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ եւ 9-րդ հոդվածների համադրված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տոհմային անասնաբուծական տնտեսությունների գրանցման եւ տոհմային կարգավիճակի տրամադրման մեխանիզմը ներքին տրամաբանական հակասություն է պարունակում եւ չի ապահովում իրավական որոշակիություն: Մասնավորապես, Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ տոհմային անասնաբուծական տնտեսությունները, անկախ կազմակերպաիրավական ձեւից, պետք է գրանցվեն համապատասխան լիազոր մարմնում: Այս ձեւակերպումից բխում է, որ տնտեսությունը դեռեւս մինչեւ գրանցումը պետք է համարվի «տոհմային անասնաբուծական տնտեսություն», քանի որ Նախագիծն արդեն այդ կարգավիճակով է անդրադառնում տվյալ սուբյեկտին: Այլ կերպ ասած՝ գրանցման ենթակա են ոչ թե պարզապես անասնաբուծությամբ զբաղվող տնտեսությունները, այլ արդեն «տոհմային» համարվող տնտեսությունները: Սակայն միեւնույն ժամանակ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսվում է, որ տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակը որոշվում է լիազոր մարմնի կողմից իրականացվող հաշվառման եւ գրանցման հիման վրա, իսկ հաշվառման եւ գրանցման արդյունքում տնտեսությունները ստանում են տոհմային կարգավիճակ: Այսպիսի իրավիճակում առաջանալու է իրավական փակ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			շրջան: Մի կողմից՝ տնտեսությունը պետք է նախապես դիտարկվի որպես տոհմային տնտեսություն, որպեսզի ընդհանրապես ենթակա լինի գրանցման: Մյուս կողմից՝ հենց գրանցման եւ հաշվառման արդյունքում է տնտեսությունը ստանում տոհմային կարգավիճակ: Այսպիսի կարգավորումը չի թույլ տալիս հստակ հասկանալ, թե որ պահից է տնտեսությունը ձեռք բերում տոհմային տնտեսության իրավական կարգավիճակ եւ ինչ իրավական հիմքով է այն մինչ այդ գործում: Վերոգրյալի լույսի ներքո՝ առաջարկվել է ապահովել Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ եւ 9-րդ հոդվածների համապատասխանությունը միմյանց:		
	Կառավարություն	Օրենքի 9-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը ունեն նույն բովանդակությունը եւ անհիմն կրկնում են միմյանց, ինչը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասին եւ լրամշակման կարիք ունի:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Կառավարություն	Օրենքի 9-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ տոհմային անասնաբուծական տնտեսության տոհմային կարգավիճակը տրվում է հինգ տարի ժամկետով՝ որոշակի պահանջների համապատասխանելու դեպքում միայն: Սակայն նույն հոդվածով եւ առհասարակ ամբողջ Նախագծով չի կարգավորվում այդ կարգավիճակի վերանայումը եւ դադարեցումը՝ հաշվի առնելով այն փաստը, որ առկա է կարգավիճակը ստանալուց հետո պարտադիր համարվող պահանջներին չհամապատասխանելու իրական վտանգ: Մասնավորապես, Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածը նախատեսում է միայն կարգավիճակի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տրամադրման վերաբերյալ կարգավորումներ, սակայն չի սահմանում՝ ինչ ընթացակարգով է կատարվում կարգավիճակի վերանայումը, արդյոք հնգամյա ժամկետի ավարտից հետո կարգավիճակը ենթակա է երկարաձգման, ինչ պայմաններով եւ ժամկետներում կարող է երկարաձգվել, ինչ հիմքերով կարող է կասեցվել եւ այլն: Նման ոչ լիարժեք կարգավորումը կարող է խնդրահարույց լինել քանի որ տնտեսավարողը չի կարող հստակ կանխատեսել իրեն ներկայացվող պահանջների չպահպանման ռիսկերը եւ իր իրավական կարգավիճակի հետագա ճակատագիրը: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվել է լրամշակել Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումները:		
	Կառավարություն	Նախագծի րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի» 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտն ունենում է անցումային դրույթներ, եթե՝ 1) նորմատիվ իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ 2) որոշակի ժամկետների (սահմանափակ ժամանակահատվածի) կամ նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված պայմանների համար անհրաժեշտ է սահմանել իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերից տարբերվող այլ նորմեր, կամ 3) նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ է սահմանել ըստ որոշակի անձանց	Ընդունվել է:	Ընդունվել է:

			շրջանակի կամ տարածքի՝ ակտի հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր:»: Ի տարբերություն Օրենքի, Նախագիծը փաստացի ներդնում է տոհմային անասնաբուծական տնտեսությունների պարտադիր պետական գրանցման եւ տոհմային կարգավիճակի համակարգ, ինչին Նախագծի ընդունման պահին գործող տնտեսությունները չեն համապատասխանում: Օրենքով տոհմային գործունեության իրականացումը նման համապարփակ կարգավիճակային ռեժիմի չի ենթարկվում եւ տնտեսությունների համար առանձին «տոհմային կարգավիճակ» ստանալու պարտադիր ինստիտուտ փաստացի նախատեսված չէ: Մինչդեռ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ եւ 9-րդ հոդվածներով ներդրվում է նոր վարչարարական համակարգ: Այդ պայմաններում եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվաի 4-րդ մասի համատեքստում առաջարկվել է Նախագծով նախատեսել անցումային դրույթներ գործող տոհմային տնտեսությունների «տոհմային» կարգավիճակի ձեռքբերման ժամկետի, կարգի, անցումային փուլի եւ այլ անհրաժեշտ կարգավորումների վերաբերյալ:		
	Կառավարություն	Նախագծի րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «նորմատիվ իրավական ակտերը» արտահայտությունն առաջարկվել է փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը» արտահայտությամբ՝ հիմք ընդունելով Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը եւ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
0	Կառավարություն	Օրենքի 10-	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 10-րդ հոդվածի համաձայն՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

		րդ հոդված	«Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից»: Նշվել է, որ սույն դրույթը Օրենքի 14-րդ հոդվածի վերախմբագրումն է, որը կարգավորել է Օրենքի նախորդ խմբագրության ուժի մեջ մտնելու ժամկետը եւ Նախագծով նախատեսվող խմբագրության պայմաններում այն այլեւս իրեն սպառել է: Ուստի առաջարկվել է Օրենքի 14-րդ հոդվածը չներառել Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող տեքստում:		